15291

1931

2010

СА 32-1
4

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

ԵՊՐԻԵՋՄԵՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԽՈՐՇՈՒՐԴՆԵՐԻ ԽՄԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍԽԱՏ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ՝ ՅԵՎ ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ՝

352
4-21

ԲԱԳՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

1931

352
4-21

Типография
„Красный Восток"
АЗПОЛИГРАФА ВСНХ
Баку Карантин., 84.
Главлит № 6224.
Заказ № 11964.
Тир. 600. Ст.-фор. А-6

ИНСТИТУТА

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԽԲՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍԽՀ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ա) Ծավալուն սոցիալիստական հարձակում ամբողջ ֆրոնտում. բոլշևիկյան տեմպեր արդյունաբերության շինարարության և գյուղական տնտեսության վերակառուցման մեջ. 5-ամյակի ավարտում 4 տարում, իսկ հիմնական, վճռական նշանակություն ունեցող ճյուղերում—3 և 2 1/2 տարում. կուլակության—վորպես դասակարգի լիկվիդացիան համատարած կոլլեկտիվացման հիման վրա. կոլխոզների ու սովխոզների աճում, վոր 5-ամյակի բոլոր նախանշումներից անցել ե և նրանք իրոք դարձել են խոշոր գյուղական

տնտեսության ձևեր. խնդիրներ, որ դրված են ԱՍԽՀ գյուղական տնտեսության առաջ՝ նրան սոցիալիստական արդյունաբերության համար բամբակային բազա դարձնելու վերաբերմամբ։

Այդ բոլոր խնդիրները բարձրացնում են գյուղխորհուրդների, որպես պրոլետարական դիկտատուրայի օրգանների, դերն ու պատասխանատվությունը՝ սոցիալիստական շինարարության խնդիրների շուրջը մասսաներին համախմբելու գործում։

5-ամյակի 3-րդ վճռական տարում բանվոր դասակարգին ներկայացրած պահանջներն ամենայն հաստատակամությամբ պահանջում են, որ խորհուրդները հիմնովին ու վճռականորեն յերեսները դարձնեն դեպի արտադրությունը, դեպի հարվածայնությունը, դեպի գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը, դեպի բամբակը, տեխնիկական մշակույթները և անասնապահությունը։

50558

բ) Այդ խնդիրները պահանջում են, որ խորհուրդների կազմակերպչական-մասսայական աշխատանքը փոխադրվի մասսաների մեջ՝ կոլխոզ-

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
2001
36030-66

ները, մեքենա-տրակտորային կայանները, շեները, որտեղ գյուղխորհուրդները պետք է կազմակերպեն աշխատավորներին, ընտրողների մասսաներին՝ կուսակցության և խորհրդային իշխանության հիմնական միջոցառումներն իրագործելու շուրջը։

2. ԽՄԲԱԿՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ա) Ելնելով վերոհիշյալից և հետագայում խնդիր ունենալով՝ բարձրացնելու խորհրդային ակտիվի դերն ու նշանակությունը կոլխոզների և մեքենա-տրակտորային կայանների արտադրական կյանքում ու նրանց արտադրական պլանների կատարման մեջ, գրավելու կոլխոզների և մեքենա-տրակտորային կայանների, կոլխոզների ու ռայոնական կենտրոնների պետապարատի բարելավման աշխատանքին, նույնպես և ամրապնդելու խորհուրդների մշտական կապն ընտրողների հետ, նրանց կարիքներին ավելի լավ սպասարկելու, ընտրողների լայն մասսաներին խորհրդային շինարարության մեջ քաշելու, նրանց կուլտուրական-քաղաքական մակարդակը բարձ-

բացնելու, կոլխոզների և մեքենա-տրակտորային կայանների կից կազմակերպվում են խորհրդային խմբակներ, որոնք միացնում են ամբողջ խորհրդային ակտիվը։

բ) Այդ խմբակների կազմի մեջ են մտնում՝ կենտգործկոմմեների, ռայգործկոմմեների, ռայոնական ու քաղաքային խորհուրդների անդամները ու թեկնածուները, խորհրդային աշխատանքի ներգրավվածները — սեկցիաների անդամները, գյուղական դատավորները, ժողովրդական ատենակալները, գյուղական կատարածուները, ջրալիազորները, դպրոցական աջակցության կոմիտեների անդամները, պետարկի աջակցության հանձնաժողովների անդամները, կոոպերատորների անդամները, կոոպերատիվների վարչությունները, պրոֆորգանների ներկայացուցիչները, մեքենա-տրակտորային կայանների ակտիվիստ-հարվածայինները, ակտիվիստ-հարվածային կոլխոզնիկները և այլն։

Ծանոթություն.—1. Տվյալ խորհրդային խմբակի կազմի մեջ են մտնում 2-րդ գլխի «բ» կետում հիշվածներից միայն նրանք, որոնք ապրում և աշխատում են տվյալ մեքենա-տրակտորային կայանում, կոլխոզում, որպես տվյալ սովխոզի, մեքենա-տրակտորային կայանի բանվորների ու ծառայողների կամ տվյալ կոլխոզի անդամներ։

2.—Սակավաթիվ կոլխոզներում, յեթե նրանցում խորհրդային խմբակների անդամների թիվը 3 հոգուց պակաս է, և յեթե կոլխոզների միջև ընդհանուր արտադրական նշանացույցներ կան, յեթե նրանց տերիտորիաները մոտիկ են իրարուց՝ թույլ է տրվում գուղխորհրդի թույլատվությամբ կազմակերպել միացյալ խորհրդային խմբակ։

գ) Խորհրդային խմբակների ամենորյա գործնական աշխատանքը ղեկավարելու համար՝ խորխմբակների անդամների ընդհանուր ժողովում, անկախ խորհրդի իսկական անդամ լինելուց, բյուրո է ընտրվում 3-ից մինչև 5 հոգուց։ Բյուրոյի նախագահ է ընտրվում խորհրդի անդամ ընկերների թվից։ (Վերջինս գյուղխորհրդի վորոշմամբ, կարող է տասնորյակի մեջ մի անդամ ազատվել արտադրական աշխատանքից՝ հաստ-

բակական պարտականությունները կատարելու համար)։

Ծանոթություն. 1.—Եթե խորհրդային խմբակն ունի 10 անդամից պակաս, խմբակի բյուրո չի ընտրվում. նրա գործունեության ղեկավարությունը խորհրդի վորոշմամբ հանձնարարվում է գյուղխորհրդի լիազորին կամ խորհմբակի անդամներից մեկին, վորը գյուղխորհրդի անդամ է և վորը հանդիսանում է խորհմբակի լիազորը։

2.—Խոշոր և ուժեղ կոլխոզներում, մեքենա-տրակտորային կայաններում յեթե կան բազմանդամ և ուժեղ խորհրդային խմբակներ, գյուղխորհրդի նախագահության թույլտվությամբ, խորհմբակի նախագահը կարող է բոլորովին ազատվել արտադրական աշխատանքից։

դ) Խորհրդային խմբակի ամեն մի անդամ, բացի իր կոլխոզի, մեքենա-տրակտորային կայանի աշխատանքին մասնակցելուց, պարտավոր է նաև վորոշ աշխատանք տանել գյուղխորհրդի սեկցիաներում։

յե) Խորհմբակները կազմակերպվում են գյուղխորհրդի լիազորությունների ժամկետով։

3. ԽՈՐՀԽՄԲԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Խորհմբակների պարտականություններն են.

1. Հաշվի առնել խորհմբակի մեջ մտնող՝ խորհրդի անդամներին ու թեկնածուներին, սեկցիաների անդամներին, սեկցիաների մեջ ներգրավածներին ու խորհմբակի այլ անդամներին (տես 2-րդ գլուխ «բ» կետ)։

2. Սպասարկվող տերիտորիայում ապրող խորհրդի անդամների ու թեկնածուների, սեկցիաների անդամների և խմբակի մյուս անդամների միջև բաշխել խորհրդային աշխատանքը։

3) Ցեռանդուն միջոցներ ձեռք առնել պրոլետարական հասարակայնության կազմակերպությունների աշխատանքներն աշխուժացնելու համար։

4. Ժամանակին ազդանշան տալ կոլխոզների, մեքենա-տրակտորային կայանների և նրանց հետ

կապված կազմակերպությունների աշխատանքում յեղած ճեղքվածքների, աղավաղումների մասին՝ այդ մասին հարց դնելով գյուղխորհրդի ու ռայգործկոմի նախագահության պլենումի առաջ։

4. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ, ԿՈԼԽՈԶԻ, ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՅԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ա) Տվյալ կոլխոզում, մեքենա-տրակտորային կայանում խորհխմբակները հանդիսանում են կապի հիմնական ողակները՝ գյուղխորհրդի սեկցիաների հետ, ուստի և իրենց ամբողջ աշխատանքը պետք է տանեն ամենասերտ կապ պահպանելով վերջիններիս հետ։

բ) Գյուղխորհուրդների սեկցիաներն ել պետք է կանոնավոր կերպով լսեն խորհրդային խմբակների հաշվետվությունները, թե տվյալ մեքենատրակտորային կայանները կամ կոլխոզներն ինչպես են կատարում արտադրական պլանները, թե ինչ դրության մեջ է խորհրդային խմբակների գործունեության այս կամ այն ճյուղը. գյուղխորհուրդների սեկցիաները պետք է խորհրդային

խմբակների հետ միասին կոնկրետ միջոցառումներ մշակեն լսված հաշվետվությունների վերաբերյալ, աջակցելով նրանց արագ իրացմանը՝ գյուղխորհրդի և ռայգործկոմի նախագահության միջոցով։

գ) Խորհխմբակներն իրենց ամբողջ աշխատանքը պետք է յենթարկեն տվյալ կոլխոզի, մեքենա-տրակտորային կայանի առաջ դրված հիմնական խնդրին՝ նրանց արտադրության բնույթի համաձայն։

դ) Խորհխմբակներն իրենց գործունեությունը տանում են տեղական կազմակերպությունների հետ (մեքենա-տրակտորային կայան, կոլխոզ և այլն) փոխադարձ ոգնության և աջակցության հիմունքներով։

յե) Խորհխմբակներն իրենց աշխատանքը կապում են տեղական մեքենատրակտորային կայանների կամ կոլխոզային կազմակերպությունների հետ (մեքենա-տրակտորային կայան, կոլխոզի, կամավոր կազմակերպության վարչություն, արտադրական խորհրդակցություն, պրոֆորգաններ և այլն), իրենց պլանները համաձայնեցնելու

միջոցով, բայց վոչ մի կերպ չմիջամտելով այդ կազմակերպությունների գործնական գործունեությանը։

զ) Խորհխմբակների այն առաջարկները և վորոշումները, վոր վերաբերում են կոլխոզների վարչությունների, մեքենա-տրակտորային կայանների կամ նրանց տերիտորիայի վրա գտնվող վորև է այլ խորհրդային և տնտեսական որգանների աշխատանքին ու առարկության չեն հանդիպում նրանց կողմից՝ կատարման համար պարտադիր են հանդիսանում։ Հակառակ դեպքում վիճելի հարցը փոխադրվում է գյուղխորհրդի ու ռայգործկոմի լուծմանը։

5. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑԵՐԸ

ա) Խորհխմբակների աշխատանքի անմիջական ղեկավարությունը և նրանց հրահանգումն իրագործում են գյուղխորհուրդն ու ռայգործկոմը՝ խորհխմբակների բյուրոների ու լիազորների պարբերական խորհրդակցություններ գումարելով, նրանց հաշվետվությունները լսելով և իրենց հրահանգիչների միջոցով նրանց կենդանի հրահանգներ տալով։

բ) Ռայգործկոմները, գյուղխորհուրդները, պետք է ժամանակին հասցնեն խմբակներին իրենց վորոշումները և նրանց աշխատանքը բնորոշող այլ նյութերն ու խորհրդային շինարարության վերաբերող անհրաժեշտ գրականությունը։

6. ԽՈՐՀԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Աշխատանք տնտեսական գծով և ապարատի բարելավման.

1. Աջակցել արտադրական պլանների կատարմանը և համապատասխան միջոցներ ձեռք առնել դրանք ամենաարագ կերպով կենսագործելու համար։ Խորհրդային ակտիվի ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկել արտադրական պլանները վորակական ու քանակական տեսակետից կատարելու շուրջը։

Բարձրացնել պատասխանատվությունը մշակվող արտադրանքի վորակի համար. խնամքով և կանոնավոր կերպով վերաբերվել սովխոզների ու կոլխոզների գույքին—մեքենաներին, գործիքներին, սերմեղենին, քարշաուժին, ինվենտարին.

պայքարել աշխատանքային դիսցիպլինան պահպանելու համար։ Խորհրդային ակտիվը ներգրավել սոցմրցմանն ու հարվածությանը, բրիգադները, հասարակական բուքսիր կազմակերպելուն։ Ակտիվ կերպով մասնակցել արտադրական խորհրդակցությունների աշխատանքին, ռացիոնալացմանը ու գյուտարարությունը։ Կապ պահպանել կոլխոզների, մեքենա-տրակտորային կայանների արտադրական խորհրդակցությունների հետ։ Կազմակերպել արտադրական դասընթացներ։

Աշակցել իր կոլխոզի, մեքենա-տրակտորային կայանի ապարատի բարելավմանը՝ նրա մեջ առաջ քաշելով խորհրդային ակտիվի անդամներից ու հարվածայիններից և ռացիոնալացման, ծախսերը կրճատելու միջոցով և այլն։

Հարցերի մշակումը.—կոլխոզների կազմակերպումը. կոլխոզի և մեքենա-տրակտորային կայանների ներքին կանոնների, կոլխոզների կանոնադրության և այլն մշակումը. կոոպերատիվների վարչությունների, կոոպբյուրոների, կոլխոզների վարչությունների, նրանց վերստուգիչ հանձնաժողովների վերընտրությունները. բժշկական ու բուժական կայանների, մանկական պարտեզների, հրապարակների, մուրների, ճաշարանների, կոոպերատիվների, կոոպբյուրոների, ագրոլիազորների, ջրալիազորների, գյուղական կատարածուների աշխատանքի վերահսկողության իրականացումը. գյուղական դատարանի (դատավոր, ժողատենակալներ, հասարակական մեղադրողներ) կազմակերպումն, ընտրությունները և վերընտրությունները և նրանց գործունեության ստուգումը։

Ցանքսային կամպանիաների, բամբակի մշակման և քաղի խնդիրների իրականացումը, սերմերի, գյուղատնտեսական մեքայլ ինվենտարի համայնացումը։ Կոլխոզների ֆոնդերի կազմակերպումը և կազմումը։ Կոլխոզներում հաշվեառի ու աշխատանքի բաժանման կազմակերպումը. բամբակի վնասատուների դեմ տարվող պայքարի քննարկումը և կիրառումը։

Հերկի, կրկնահերկի և բամբակը ջրելու հարցերի մշակումը։ Բամբակաբուծության և այլ մշակույթների, մանավանդ այնպիսի արժեքավոր

մշակույթների, վորպիսիք են կանեփը, քյանդիրը, կաուչուկաբերը և այլն, ուժեղացումը, զարգացումը և լավացումը։

Ցանքսերի, անասունների պայմանագրումը. ինքնատուրքավորման, պետական փոխատվությունների, հումքավլունքի հավաքման կազմակերպումը և իրագործումը. ուսուցման, ճանապարհային շինարարության, պատնեշավորման և տնտեսական-քաղաքական ու կուլտուր-կենցաղային այլ հարցերի կազմակերպումը։

բ) Խորհրդային շինարարության մասսայական աշխատանքը.

2. Իր կոլխոզում, մեքենա-տրակտորային կայանում կազմակերպել ու անցկացնել զեկուցումներ՝ քաղխորհուրդների, ռայխորհուրդների, ռայգործկոմների, գյուղխորհուրդների և նրանց առանձին սեկցիաների աշխատանքի մասին։ Մշակել խորհուրդների վերընտրությունների հարցերը։ Ակտիվ մասնակցել խորհուրդների, կոլխոզների, մեքենա-տրակտորային կայանների կողմից տարվող կամպանիաներին։ Կապ հաստատել Ագրկենտգործկոմին կից գտնվող խորհրդա-

36030-66

յին Շինարարության Տան և Ագր. Պետ. Գիտ. Հետ. Ինստ. խորհշինարարության ու իրավունքի բաժանմունքի հետ. բացատրել և հանրամատչելի դարձնել Ագրկենտգործկոմի, Ժողկոմխորհի, ռայգործկոմի, գյուղխորհրդի և այլ խորհրդային օրգանների վորոշումները։ Սիստեմատիկ վերահսկողություն իրականացնել՝ ընտրողների նակազի կատարման վերաբերյալ. դրա համար պետք է նակազի առանձին կետերը բաժանել խորհխմբակի անդամների միջև՝ սիստեմատիկորեն ստուգելու դրանց իրագործումը տվյալ կոլխոզի և մեքենա-տրակտորային կայանի առանձին անձերի և կազմակերպությունների կողմից. դրա մասին պիտի տեղակացնել պատի թերթերի հատուկ համարներ, բյուլլետեններ և այլն հրատարակելով։

Վերընտրական կամպանիայի ժամանակաշրջանում նակազին արվող լրացումների և գործնական առաջարկների հաշվառումը կազմակերպել. պատգամավորների, սեկցիաների անդամների սիստեմատիկ հաշվետվությունն անց կացնել ընտրողների առաջ՝ թե խորհրդի, նրա առանձին սեկցիաների աշխատանքի և թե խորհուրդում ու

Гос. библиотека ՀԽՍՀ-Арм.ССР им. А. Мясникяна

նրա սեկցիաներում կատարած իր աշխատանքների մասին։

Կազմակերպել հերթապահություններ ու խորհրդատու կետեր՝ գանգատներ, դիմումներ ընդունելու, խորհուրդներ տալու խորհրդային շինարարության և այլ հարցերի մասին։

Ընտրողների առաջ հաշիվ տալ անգործունյա պատգամավորների կամ սեկցիայի անդամների մասին։ Ոգնել գյուղխորհուրդներին գյուղական տնտեսության վերակառուցման, նրանց աշխատանքն ամրապնդելու և լավացնելու գործում։ Շեֆաշխատանք կազմակերպել և իրագործել ու այդ աշխատանքին ներգրավել խորհրդային ակտիվը, կապ հաստատել շեֆությունն անող կազմակերպությունների խորհրդի հետ։ Մոտակա ձեռնարկների խորհխմբակների հետ կապ ու համերաշխություն ստեղծել։

3. Խոշոր և ուժեղ կոլխոզներում խորհաշխատանքը փոխադրվում է առանձին հողամասերը, բրիգադները, վորտեղ և աշխատանքը տարվում է բյուրոյի ընտրած պատասխանատու կազմակերպիչի ղեկավարությամբ։

Վերջինիս վրա պարտք է դրվում.

ա) Պատգամավորների ու սեկցիաների անդամների աշխատանքի մասին հաշվետվություն անց կացնել՝ իր հողամասի, բրիգադի կոլխոզնիկների ժողովում. հերթապահություն, գանգատների ընդունելություն կազմակերպել և ուղարկել այդ գանգատները համապատասխան տեղերը։ Առանձին պատգամավորի և սեկցիաների անդամների աշխատանքը հաշվետուել։ Մասնակցել հողամասային և բրիգադային արտադրական պլանների նախապատրաստմանը։ Հողամասի բրիգադային խորհրդային ակտիվը միացնել և հաշվի առնել հողամասի, բրիգադայի խորհրդային ակտիվի խորհրդակցություններ հրավիրել։ Կատարել խորհխմբակի վորոշումները։ Կատարել և մշակել այն բոլոր հարցերը, վոր հիշված են 6-րդ գլխի «ա» և «բ» կետերում։

բ) Թված պահանջների համաձայն՝ կոլխոզների և մեքենա-տրակտորային կայանների խորհխմբակի աշխատանքի հիմնական մեթոդները, վոր թափանցված պիտի լինին նրանց ամբողջ գործունեության մեջ, հանդիսանում են.—սոցմրր-

CA 32-И / 4

ցումը, առանձին կոնկրետ հարցերի վերաբերմամբ հարվածային բրիգադներ կազմելը, միջանցիկ բրիգադներ. սոցքուխիր կազմակերպելը, խմբակի առանձին անդամներին առաջադրություններ տալը՝ առանձին հարցերի հետազոտության համար յեվ այլն։

1576

ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗУОП-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ERMƏNI DILINDƏ

ASŞC Kolxozlarьnda və MTS qənd şyralarьnьn şyra gryplarь hakkьnda

20 **NIZAMNAMƏ**

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0047914